

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ ՃԱՌԸ

(Արտասանված Յականում)

Վեհափառ Տէր և Ժողովուրդ.

Գիր ու դպրութեան այս մեծ տօնին, հայ մտքի յաղթանակի այս մեծաշուք հանդէսին, Մօսկվայի հայ գաղութը սրտի բերկրանքով ողջունում է Մայրագոյն Պատրիարքիդ՝ որպէս ազգընտիր ազգապետի, ողջունում է Ժողովրդիդ՝ որպէս հայ ոգու պահնորդի և կենդանի աղբիւրի:

Ժողովրդիդ ընտիր զաւակներն են այսօր մեծարվող պանծալի Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը. քո հոգու հիւթերով են անված գաղափարի և պարտքի այդ առաքեալները: Երջանիկ է այն ազգը, որ 1500

տարի առաջ հանդէս է բերել այդ մեծագործներին, պատմական կեանքի իրաւունք ունի այն ցեղը, որ հնութեան ահարկութաւարի մէջ ծնել է այդ լուսաւորիչներին:

Հայրենիքի նիւթական մեծութիւնը չէ, որ նրանք հոգացել են. ազգի հոգևոր բարգաւաճումն է, որ նրանք երկնել են: Եւ գաղափարական Մեսրոպ Մաշտոցը իր գործակից ս. Սահակի հետ տուին քեզ գիր, տուին քո ստեղծագործութեան, քո խոհ ու յոյզերի, քո խինդ ու վշտի արտայայտութեան սքանչելի գործիքը: Եւ քո հոգին վառվեց սրբազան հրով: Եւ գիրն ու դրպրոցը դառնում են քո կեանքի ամրակուռ կայանը, քո ապահովութեան միակ խարիսխը, քո մտքի կենարար աղբիւրը: Եւ հայութիւնը քրիստոնէական կուլտուրայի հազորդակից է հանդիսանում. դէմ տալով ասիականութեան բուռն յորձանքին՝ նա պաշտպանում է գիտութեան լոյսը, կատարում է մի վեհ առաքելութիւն:

Գարեբ գլորվեցին անցան, անխնայ ժամանակը իր արիւնսաներկ հոսանքի մէջ կործանեց-ոչնչացրեց հզօր պետութիւններ և ազգեր, իսկ դու, հայ ժողովուրդ, կանգուն մնացիր, որպէս ճկուն եղէգ. սուր ու կրակին դիմացար, արեան գետերից անվնաս դուրս եկար, և սարսափի ու տառապանքի բովից անցած՝ դու պահպանեցիր քո բազմաշարժար գոյութիւնը, պահպանեցիր քո ազգային դէմքը: Եւ այս բարիքը դու պարտական ես քո մեծ զաւակներին, քո ստեղծագործութեան վառ արտայայտիչ ս. Սահակին և Մեսրոպին: Քեզ փրկեցին ոչ հայ աշխարհի մեծ մեծներն ու իշխանաւորները, ոչ հայ երկրի զօրեղներն ու կրեստները. քեզ փրկեցին գիրն ու դպրութիւնը, քո հոգու այդ մշտավառ ջահը:

Ապաւինենք ուրեմն այդ հրաշագործ դրպրութեան, սիրենք նրան որպէս մեր աչքի լոյսը, սիրենք գիրն ու դպրոցը, և դու, հայ ժողովուրդ, միշտ կանգուն կը մնաս, կը մտնես ստեղծագործող մարդկութեան շարքը, կը ձգես քո արժէքաւոր լուման ընդհանուր կուլտուրայի գանձանակը:

Օ՛ն ուրեմն, խոնարհվենք խաւարի մէջ մեզ լոյս ծագող, լքման միջոցին մեզ ոյժ տուող Պոռթէթէոսների յիշատակի առաջ, վառ և բորբոք պահենք մեր հոգու խորքերում նրանց սրբազան աւանդներն ու պատգամները, սովորենք գնահատել մտքի մշակներին, գաղափարն ու պարտքը, և մենք ապագայ ունենք, և մենք կարող ենք պատուով ապրել:

Յաւիտենական հանգիստ հայութեան մեծ զաւակաց օսկորներին, կեցցէ՛ նրանց ծնող ազգը: